ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մայիսի 2021թ. N ՄՈ/146-2021

ք. Արմավիր

ԽԱՉԻԿ ԻՆՋՅԱՆԻՆ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N2 հավելվածով, հիմք ընդունելով Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության տնօրենի պաշտոնակատարի 2021 թվականի մայիսի 5-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի մայիսի 14-ի ՆՄՈ/145-2021 որոշումը.

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Խաչիկ Ինջյանին 2021 թվականի մայիսի 14-ին գործուղել քաղաք Երևան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի ճանապարհային փոխադրումն ապահովելու նպատակով:
2. Գործուղումն իրականացնել TOYOTA LC 150 մակնիշի 055 LL 55 պետհամարանիշի ավտոմեքենայով:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետի պաշտոնակատար՝ Ա. Վասիլյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ՝ Ա. Համբարձումյան)՝ ապահովել համապատասխան վառելանյութի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 14.05.2021 19:12:13 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230